ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԿ ԱՐԱՐԱՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԶԱՊԵԼ ԵՍԱՅԱՆԻ ՎԻՊԱՇԽԱՐՀԸ

Ժ.01.01 - «Հայ միջնադարյան և նոր գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2026

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանի հայ բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդում:

Գիտական ղեկավար՝	**Մակարյան Ալբերտ Արշավիրի** բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	**Մուրադյան Լաուրա Գուրգենի** բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
	Սեյրանյան Լիլիթ Բորիսի բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Առաջատար կազմակերպություն՝	**ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2026 թ. հունիսի 3-ին՝ ժամը 14^{30}-ին, ԵՊՀ-ում գործող՝ ՀՀ ԲԿԳԿ-ի գրականագիտության 012 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ ք. Երևան, 0025, Աբովյան 52^{ա}, ԵՊՀ-ի հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, 202 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026 թվականի ապրիլի 30-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

ԱԼ. Ա. ՄԱԿԱՐՅԱՆ
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Վերջին տարիներին հայ գրական-մշակութային կյանքում մեծ հետաքրքրություն է առաջացել Զապել Եսայանի նկատմամբ: Դա պայմանավորված է հեղինակի բացառիկ ըմբոստ կենսագրությամբ, առաջադեմ հայացքներով և իր կողմից արծարծված թեմաների արդիականությամբ:

Կիլիկիայի ջարդերի, ցեղասպանության և հայրենազրկման, պանդխտության ու հայրենի հողում ազգային պետություն ունենալու թեմաների ուսումնասիրությունն այսօր էլ շարունակում է մնալ արդիական: Դրանից բացի՝ Եսայանը հրաշալիորեն կարողացել է շոշափել ընդհանրապես համայն մարդկությանը հուզող այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են սերը, երազանքը, պայքարը, խոսքի ազատությունը, մարդու ազատության տենչը, որոնք մշտարդիական են:

Առաջադրված թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ Զապել Եսայանը, զոհ գնալով անհատի պաշտամունքին, երկար տարիներ եղել է արգելված հեղինակ, և նրա ստեղծագործություններից շատերը զուրկ են մնացել հրատարակվելու կամ վերահրատարակվելու հնարավորությունից: Սփյուռքում նա համարվել է խորհրդային կողմնորոշում, իսկ ԽՍՀՄ-ում՝ եվրոպական հայացքներ ունեցող հեղինակ, ինչը ևս բացասաբար է անդրադարձել հեղինակի ստեղծագործությունների հանրահռչակման վրա: Եվ միայն վերջին տարիներին է, որ Եսայանի անունը կարելի է տեսնել դպրոցական ու բուհական ծրագրերում, հայրենիքում և Սփյուռքում հրատարակվող գրքերում ու պարբերականներում, միջազգային ամենատարբեր հարթակներում: Անվեհեր կենսագրության և առաջադեմ հայացքների համար Եսայանն ամերիկյան պարբերականների կողմից կազմված վարկանիշային ցուցակում ընդգրկվել է աշխարհի ամենախիզախ կանանց շարքում: Տպավորիչ է, որ 2018 թ. մարտի 8-ին նրա անունով է կոչվել Փարիզի կենտրոնական փողոցներից մեկը:

Եթե ասվածին գումարենք նաև Եսայանի ազգային-հայրենասիրական գործունեության, ինչպես նաև հանրային-քաղաքական հայացքների, մասնավորապես կնոջ ազատ արտահայտվելու իրավունքին ուղղված քայլերի կարևորությունը, ապա ամբողջովին հասկանալի կլինի կանադացի հետազոտող Վիկտորյա Ռոուի՝ հայ կին գրողների, այդ թվում Զապել Եսայանի նկատմամբ ունեցած հետաքրքրությունը[1] կապված կնոջ իրավունքների և կարևոր դերակատարման խնդրի հետ: Հավելենք նաև, որ թուրքական արմատներով բրիտանացի վիպասան, լրագրող և կանանց իրավունքների ջերմ պաշտպան Էլիֆ Շաֆաքը (ծնվ.

1 Տե՛ս Victoria Rowe. The ,,New Armenian woman,,. Armenian women's writing in the Otoman empire, 1880-1915, University of Toronto, 2000. Տե՛ս նաև Victoria Rowe. A history of Armenian womans writing: 1880-1922, Gambrige Scholars Press Ltd. London, 2003.

1971), որն աշխարհին առավել հայտնի է «Ստամբուլի ընկեցիկը», «Սիրո քառասուն կանոնը» և «Եվայի երեք դուստրերը» վեպերով, չափազանց բարձր է գնահատում Եսայանին: Հայ վիպագրուհու գրական ժառանգության այդ մեծագույն երկրպագուի համար նա ոչ միայն գրող է, այլև կանացի ուժի, արդարության և համարձակության խորհրդանիշ: Է. Շաֆաքը հաճախ է շեշտում, որ «Զապել Եսայանը Օսմանյան կայսրության ամենակարևոր ձայներից մեկն է, որը պետք է լսելի լինի ժամանակակից ընթերցողին՝ անկախ ազգությունից»[2]:

Ուշադրությամբ ուսումնասիրելով Եսայանի նկատմամբ առաջացող հետաքրքրության արտահայտումները՝ նկատել ենք, որ առավելապես հանրահռչակվում և ուշադրության են արժանանում հեղինակի հասարակական-քաղաքական գործունեությունը, մասնավորապես ֆեմինիզմին վերաբերող հարցերը, իսկ հեղինակի ստեղծած բարձրարվեստ գրականության գիտական ուսումնասիրությունը կարծես շարունակում է դուրս մնալ հետազոտողների ուշադրությունից: Ուստի կարծում ենք, որ վաղուց հասունացել է պահը՝ փորձելու գիտական թարմ հայացքով և ժամանակակից մեթոդներով քննել Զապել Եսայանի վիպաշխարհը, ինչին էլ միտված է ներկա ատենախոսությունը:

Հետազոտության նպատակներն ու խնդիրները: Իր առանցքում ունենալով Զապել Եսայանի վիպաշխարհի քննությունը՝ ատենախոսության հիմնական նպատակներն ու խնդիրները հետևյալներն են՝

- հստակեցնել Զապել Եսայանի գեղարվեստական արձակի ժանրային կազմը,
- կատարել երկերի թեմատիկ բաժանում,
- վերլուծել հեղինակի կերտած գրական կերպարները,
- քննել կոմպոզիցիայի և պատումի արվեստը,
- արժևորել հայ գրականության պատմության մեջ Եսայանի ունեցած բացառիկ դերը:

Թեմայի ուսումնասիրվածության աստիճանը: Հայրենի գրականագիտությունն ու գրաքննադատությունը Եսայանի ստեղծագործություններին անդրադարձել են դրանց ստեղծմանը զուգահեռ: Ժամանակի մամուլը դրվատանքի խոսքեր է գրել նրա արձակի մասին՝ բարձր գնահատելով հեղինակի բերած նորույթը, խոսքի գրավչությունը, դիպաշարի սահունությունը՝ հենց սկզբից հեղինակին վեր դասելով շատ արձակագիրներից: Թե՛ հեղինակի ժամանակակիցները և թե՛ մերօրյա գրականագետները գիտական բարեխղճությամբ ու հիմնավորվածությամբ անդրադարձել են Զապել Եսայանի ***առանձին ստեղծագործությունների***՝ ըստ արժանվույն գնահատելով տաղանդաշատ գրագիտուհու արձակը: Այս բոլոր անդրադարձները, սակայն, հիմնականում կատարվել են ***ակնարկային կերպով***:

[2]Shafak E., Great Women of History: Zabel Yesayan, 'The Gurdian', 2020, June 20.

Գրականագիտական միակ ***ամբողջական*** ուսումնասիրությունը, անտարակույս, անվանի գրականագետ Սևակ Արզումանյանի՝ Զապել Եսայանի կյանքին և գործին նվիրված լրջմիտ ու բարձրարժեք մենագրությունն է[3]: Թեև դրա հրատարակումից անցել է ավելի քան կես դար, այնուամենայնիվ այն մինչ օրս ուղենշային է Եսայանի ստեղծագործության՝ հետագա շրջանի բոլոր հետազոտողների համար:

Աշխատանքի գիտական նորույթը: Մեր կողմից ներկայացվող դրույթները միտված են գիտական նորույթ հաղորդելու եսայանագիտությանը.

- առաջին անգամ փորձ է կատարվել Զ. Եսայանի արձակը ենթարկելու թեմատիկ հստակ բաժանման.
- հեղինակի՝ արխիվային փաստաթղթերում և վավերագրերում (դրանց մի մասն ամբողջովին նորահայտ է) արտահայտած մտքերը դիտարկվել են որպես գրական ստեղծագործությունների մեկնաբանման ելակետ.
- Զ. Եսայանի բազմաթիվ երկերին տրվել են ժանրային հստակ անվանումներ՝ միմյանցից տարանջատելով նորավեպն ու պատմվածքը, վեպը և վիպակը, հուշագրությունը և ուղեգրությունը, որոնք մինչ այժմ հիմնականում քննվել են «ստեղծագործություն» կամ «երկ» ընդհանրական բնորոշմամբ.
- եթե պրոֆ. Ս. Արզումանյանը խորհրդային գրականագիտությանը բնորոշ գծերով հասկանալիորեն փորձել է Զ. Եսայանի ստեղծագործությունների կերպարների մեջ ամեն կերպ մատնանշել դասակարգային պայքարի մարմնավորումներ, իսկ վերջերս երիտասարդ ուսումնասիրող Ա. Սարգսյանը նպատակ է ունեցել բացառապես քննելու մտավորականի կերպարը վիպագրուհու երկերում, ապա ներկա աշխատանքում Զ. Եսայանի երկերը դիտարկվել են ամենատարբեր կողմերով.
- հատուկ ուշադրության են արժանացել Զ. Եսայանի լեզուն և ոճը, բառերին մոգական գույներ և շարժումներ հաղորդելու բացառիկ կարողությունը, և այս առումով ևս հեղինակի բազմաթիվ ստեղծագործություններ առաջին անգամ ենթարկվել են գեղարվեստական նոր արժևորման՝ համակողմանիորեն ներկայացնելով նաև հեղինակի պատումի արվեստը:

Ատենախոսության մեթոդաբանությունը: Փորձելով վերլուծական եղանակով ներկայացնել Զ. Եսայանի վիպաշխարհը՝ ուսումնասիրման տարբեր մեթոդների (պատմահամեմատական, կենսագրական, պոետիկական, սոցիոլոգիական) համադրմամբ համակողմանի դիտարկել ենք վիպագրուհու արձակը, վեր հանել նրա կոմպոզիցիոն, պատումային և գաղափարագեղարվեստական այլ ա-

[3] Տե՛ս **Արզումանյան Ս**., Զապել Եսայան. կյանքը և գործը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1965, 269 էջ:

ռանձնահատկություններ: Աշխատանքը փորձել ենք զերծ պահել ժամանակակից գրականագիտության մեջ երբեմն հանդիպող արհեստական սխեմատիզմից:

Ատենախոսության կիրառական նշանակությունը: Աշխատանքն ունի կիրառական նշանակություն. այն կարող է օժանդակել հայաստանյան բուհերի բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի կազմելուն ու համապատասխան ուսումնամեթոդական ձեռնարկներ ստեղծելուն, նպաստել Զ. Եսայանի գրական ժառանգությանը նվիրված նորանոր ուսումնասիրությունների լուսաբանման գործին:

Աշխատանքի փորձաքննությունը: Աշխատանքի հիմնադրույթներն ու եզրակացությունները ներկայացվել են գիտաժողովներում և հեղինակի կողմից հրատարակված գիտական հոդվածներում: Ատենախոսությունը քննարկվել է ԵՊՀ ակադ. Հրանտ Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնում և ստացել դրական եզրակացություն:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից՝ իրենց համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է 135 էջ:

Ներածության մեջ ներկայացվել են թեմայի արդիականությունը, առաջադրված խնդիրները և նպատակները, հարցի պատմությունն ու գիտական նորույթը, հետազոտության մեթոդաբանությունը: Քանի որ մինչ օրս դեռևս լիովին ճշտված չեն արևմտահայ գրագիտուհու կյանքի և գործունեության որոշ հանգամանքներ, նպատակահարմար ենք համարել ատենախոսության ներածական հատվածում համառոտ ներկայացնել նաև Զ. Եսայանի դիմանկարի ուրվագիծը՝ օգտագործելով արխիվային և գիտական վերջին ճշգրտումները:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՉԱՊԵԼ ԵՍԱՅԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՓՈՔՐ ԱՐՁԱԿԸ

Ատենախոսության առաջին գլխի սկզբնամասում քննվել են Չապել Եսայանի վաղ շրջանի ստեղծագործությունների բնորոշ հատկանիշները: Նկատվել է, որ արևմտահայ գրագիտուհին գրականություն է մտել «Երգ առ գիշեր» արձակ բանաստեղծությամբ, որը դուրյանական ազդեցությամբ գրված և ռոմանտիկական պատկերներով հագեցած ստեղծագործություն է: Այս շրջանի երկերի գեղարվեստական զանազան արժանիքներն արդեն հուշում էին ընթերցողին, որ գրականություն է մուտք գործում հոգեբանական նրբագույն զգացմունքներ պատկերել կարողացող ինքնատիպ մի հեղինակ, որը հետո, Ա. Չոպանյանի բնորոշմամբ, «տիկին Չապել Եսայան անունով Հայոց մեծագույն գրագիտուհին պիտի դառնար»:

1.1 ՆՈՐԱՎԵՊԵՐԸ

Ատենախոսության *առաջին գլխի այս ենթաբաժնում* մինչ հեղինակի նորավեպերի քննությունը մանրամասն անդրադարձ է կատարվել նորավեպի ժանրին և դրա արտահայտման ձևերին արևմտահայ գրականության մեջ: Նկատվել է, որ արևմտահայ իրականության մեջ նորավեպի ծնունդը և աննախադեպ տարածումը, հարկավ, կապված էին կյանքի *դինամիկ* ընթացքի հետ: Արագորեն փոփոխվող իրականության մեջ երկարաշունչ վեպի ժանրը կարծես «չէր հասցնում» պատկերել կյանքում տեղի ունեցող իրադարձությունները: «Արևմտահայ նորավիպագրությունը, հար և նման ժանրի համաշխարհային դրսևորումներին, հատկանշվում է դինամիզմով: Առհասարակ դինամիզմը նորավեպի ինքնության կազմակերպող բաղադրատարրերից է, և սա ժանրի համար բնական է ու պարտադիր»,- նկատել է Գրիգոր Հակոբյանը[4]:

Հայ և անհրաժեշտության դեպքում արևմտաեվրոպական գրականության համատեքստում նախ՝ Եսայանի փոքր արձակից առանձնացրել ենք նորավեպերը՝ հստակեցնելով դրանց ժանրային առանձնահատկությունները: Ապա ուսումնասիրելով նորավեպերի տարբեր նմուշներ՝ եզրակացրել ենք, որ տվյալ ժանրն այլևայլ հայտնի հատկանիշների հետ մեկտեղ առավել ազդեցիկ երանգներ է ստանում իր, այսպես ասած, *թաքնված գաղափարախոսությամբ, հաճախ չգրվող, բայց ենթատեքստում հասկացվող իմաստով:*

---

[4] **Հակոբյան Գր.**, Արևմտահայ նորավեպը (1880-1910-ական թվականներ. ժանրի պատմություն և տեսություն) ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 1996, էջ 56:

Նորավիպագրությանը բնորոշ ընդհանուր գծերը ներկայացնելուց հետո քննել ենք Զ. Եսայանի «Հանցավոր կինը», «Մրցումը», «Սիրո վրեժը», «Ցավին հեշտանքը» նորավեպերը և եկել այն համոզման, որ արձակագրի՝ 1900-ական թվականների սկզբներին հրատարակած գործերն արդեն հայ հոգեբանական գրականության լուրջ նմուշներ են՝ այնքան տարբեր ժամանակի բազմաթիվ նորավիպագիրների գործերից: Այս համատեքստում կարծիք ենք հայտնել, որ եթե գրականությանը հայտնի ամենահաջող նորավեպերում մանրամասն և համոզիչ պատկերված է գերազանցապես կանացի հոգեբանությունը, ապա Եսայանը կարողացել է նույնքան հաջող պատկերել նաև *կղամարդու հոգեկերտվածքը* («Մրցումը» նորավեպը): Բացի այդ՝ գեղարվեստականացնելով կնոջ ազատագրության խնդիրը՝ արձակագիրը հաջողությամբ պատկերել և հայ գրականություն է բերել նաև *հաղթանակող և վրեժխնդիր կնոջ կերպարներ* («Մրցումը» և «Սիրո վրեժը» նորավեպերը):

1.2 ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԸ

Առաջին գլխի երկրորդ հատվածում ուսումնասիրվել են Եսայանի պատմվածքները, որոնք նույնպես աչքի են ընկնում հոգեբանական նուրբ բացահայտումներով և գեղարվեստական տպավորիչ լուծումներով: Դրանք ևս նվիրված են անհատին ու նրա ապրումներին, պատկերում են այնպիսի իրավիճակներ, որոնք արտաքուստ թվում են սովորական, սակայն պարունակում են հոգեբանական խոր ու անկրկնելի շերտեր:

Ներկայացնելով Եսայանի պատմվածքների ժանրային առանձնահատկություններն ու գեղարվեստական որոշ ստվերներ, այնուհետև դրանք հստակորեն տարբերակելով նորավեպերից՝ քննարանվել են «Անձնասպան տղաքներ», «Աչքերը», «Տղու բնազդներ», «Հանելուկը» և այլ պատմվածքները: Նկատվել է, որ դրանք իրենց գեղարվեստական արժանիքներով, պատկերակերտման ձևերով և պատումի արվեստով բավականին տարբերվում են միմյանցից. հոգեբանական լրջագույն բացահայտումների կողքին երբեմն նշմարվում են *հանգույցների հապճեպ լուծումներ*: Թերևս հենց այս ստվերոտ կողմերի ազդեցությամբ է Սվետլանա Գրիգորյանը նկատել, որ «Եսայանի սկզբնական շրջանի ստեղծագործություններում տեղ են գտել որոշ հակասություններ: Այդ տարիներին գրողը դեռևս իր վրայից չէր թոթափել ազդեցությունները»[5]:

---

[5] **Գրիգորյան Ս.**, Զապել Եսայանի փոքր կտավի ստեղծագործությունները, Երևան, ՀՍՍՀ ժողկրթության մինիստրության տպարան, 1990, էջ 33:

1.3 ՎԻՊԱԿՆԵՐԸ

Առաջին գլխի երրորդ հատվածում ուսումնասիրվում են Եսայանի վիպակները՝ «Սպասման սրահին մեջ», «Շնորհքով մարդիկ», «Երբ այլևս չեն սիրեր», «Քողը», «Մոլորումը», «Անձկության ժամեր», «Հոգիս աքսորյալ» և «Արգելքը»: Դիտելի է, որ արձակի փոքր տեսակում հաջողված փորձեր կատարելուց հետո վիպագրուհու գրական տաղանդը դրսևորվել է նաև ավելի լայնակտավ երկերում, հանգամանք, որը հետագայում դարձավ նրա ստեղծագործական տարերքը և կյանքի կոչեց ոչ միայն սոցիալ-հոգեբանական, առօրյա-կենցաղային, այլև ազգային-հայրենասիրական թեմաներ՝ վերջնականապես ձևավորելով Եսայան արձակագրի հիմնական դիմագիծը:

Եսայանի վիպակներն իրենց ձևով, ներքին կուռ կառուցվածքով, մտքերի թարմությամբ և դիպաշարի սլացիկությամբ նոր գրավչություն հաղորդեցին գրական կյանքին: Վիպակների շարքում գեղարվեստական արժանիքներով հատկապես առանձնանում է «Շնորհքով մարդիկ»-ը: Հեղինակը թեման վերցրել էր Կ. Պոլսի առօրեական կյանքից՝ այն ենթարկելով հոգեբանական լուրջ վերլուծության:

Ատենախոսության այս հատվածում մեր կողմից կատարված դիտարկումները շաղկապված են նաև Զ. Եսայանի հրապարագրությանը, նրա խորիմաստ հոդվածներին: Խոսքն այստեղ վերաբերում է ֆեմինիզմի եսայանական ըմբռնումներին, որոնք միանգամայն տարբեր էին կնոջ ազատագրության առթիվ ժամանակի մտավորականների հակասական տեսակետներից: «Պետք է որ կիները աշխատին, ինչպես ամեն կենդանի էակ. պետք է, որ դադրին մակաբույծները ըլլալե»,- սա էր վիպագրուհու կարծիքը ֆեմինիզմի մասին: Կարևորելով թեման՝ այս հարցի առիթով կատարվել են դիտարկումներ՝ քննաբանելով Սրբուհի Տյուսաբի «Մայտա»-ի թեր և դեմ արձագանքները՝ սկսած Մատթեոս Մամուրյանից ու Եղիա Տեմիրճիպաշյանից մինչև Հակոբ Պարոնյան և Գրիգոր Զոհրապ:

Քննելով վիպակների կառուցվածքային որոշ առանձնահատկություններ՝ հատկապես «Վերջին բաժակը» վիպակի կապակցությամբ նկատել ենք օրագրային պատումի առկայության կարևորությունը, քանի որ սա սենտիմենտալիզմից եկող և հայ գրականության մեջ արդեն տարածում գտած (Տյուսաբ, Նար-Դոս...) էպիստոլյար ժանրի արտահայտությունն էր, որի միջոցով արձակագիրը հնարավորություն է ստանում արտաքին աշխարհից կտրվելու և կենտրոնանալու հերոսի ներաշխարհի, նրա հույզերի ու ապրումների վրա[6]:

Ամփոփելով Եսայանի վիպակների քննությունը՝ նկատել ենք նաև գեղարվեստական որոշ պակասություններ, որոնցից են, օրինակ, կոմպոզիցիոն թերացումներն ու քնարականության բարձր չափաքանակը. դրանք կարծես փոքր-

[6] Մանրամասն տե՛ս Bray J., The Epistolary Novel in the Long Eighteenth century: A Social network Analysis, 2019, United Kingdom, Routledge, 172 p.

ինչ շեղում են ընթերցողին, որոշ դեպքերում շփոթեցնում ժամանակագրական հաջորդականության և տարածական ընդգրկման մեջ: Այդ հանգամանքը դեռ շատ վաղուց նկատել է ժամանակի երևելի գրագետներից մեկը՝ Թեոդիկը՝ գրելով. «Ֆրանսերէն կը մտածէ և հայերէն կը գրէ: Ասոնք սակայն մելանի մանր կաթուքներ են գեղեցիկ էջերու վրա տեղ տեղ ցրցնքուած, որոնք տեսքին չնչին աղտոտութենէն զատ ուրիշ անպատեհութիւն մը չունին»: Նշելի է նաև, որ եսայանական արձակի մասին խոսելիս հեղինակին անձնապես ճանաչող և գրական դիմանկարը պատկերել փորձող Թեոդիկը գրում է. «Արձակ մը, որուն հետ կարծես հանգիտութիւն մը ունի իր թոյլ ու ծփծփուն ալ քայլոաձքը»[7]:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ ԵՎ ՄԱՐԴԸ ԶԱՊԵԼ ԵՍԱՅԱՆԻ ՎԻՊԱՇԽԱՐՀՈՒՄ

Ատենախոսության երկրորդ գլխում ամբողջացվել է վիպագրուհու արձակի քննությունը: Իրապես համոզված, որ Զ. Եսայանի կյանքի գեղարվեստական պատկերումն ինքնին որոշակիորեն ենթադրում է նրա ապրած ժամանակաշրջանի հիշատակում՝ նպատակահարմար ենք գտել աշխատության երկրորդ գլուխը բաժանել չորս մասերի՝ պոլսյան, փարիզյան, կիլիկյան և խորհրդային:

2.1 ՊՈԼՍՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ

Այս ժամանակշրջանը համընկնում է Զ. Եսայանի մանկության և պատանեկության տարիների հետ: Հրաշագեղ Կ. Պոլիսը ստեղծագործելու առատ նյութ է տվել հեղինակին՝ ինչպես բնության գեղեցիկ տեսարանների պատկերման, այնպես էլ հասարակական-քաղաքական և սոցիալական վայրիվերումների ներկայացման առումներով: Ուստի փաստել ենք, որ Եսայանի ստեղծագործություններում Պոլիսը ներկայանում է երկու հակադիր, իրարամերժ պատկերներով, որոնց հակադրամիասնության մեջ էլ կերտվում են մարդկային ամենատարբեր ճակատագրերը:

Վերլուծություններն սկսել ենք վիպագրուհու արխիվում մասամբ պահպանված ինքնակենսագրական բնույթի մի ձեռագրից, որը պայմանականորեն ընդունված է անվանել «Ինքնակենսագրություն»: Նկատվել է, որ այդ ստեղծագործությանն առանձնակի արժեք է հաղորդում հայ ժողովրդի կացության պատկերումը Օսմանյան կայսրությունում: Հաջորդաբար վերլուծելով «Հլուներ և

---

[7] **Թեոդիկ**, Ճանչվոր դեմքեր, «Մանզումեի էֆքեար», լրագիր, Կ. Պոլիս, 1904, թիվ 785, էջ 59-60:

ըմբոստներ», «Կրակե շապիկը», «Սիլիհտարի պարտեզները» և «Սկյուտարի վերջալույսները» վիպակները՝ նկատել ենք մի շարք ուշագրավ առանձնահատկություններ, որոնցից մեկը, օրինակ, Եսայանի երկերի գործող անձանց՝ իրենց արարքներով ու դատողություններով «ինքնադրսևորվելու» մեթոդն է:

Պոլսյան ժամանակաշրջանը պատկերող ստեղծագործությունների քննության մեջ առանձնապես ուշարժան է «Սիլիհտարի պարտեզները», որի վերլուծության մեջ մի շարք փաստարկներով բացահայտվում են ինքնակենսագրական երկի կոմպոզիցիոն առանձնահատկությունները, մասնավորապես այն, որ վիպակի մաս կազմող առանձին պատումներից յուրաքանչյուրը նվիրված է առանձին դիպվածի և վիպակից դուրս էլ կարող է «հանդես գալ» որպես ինքնուրույն գործ: Կամ այն, որ վիպագրուհուն հաջողվել է մարդկային սովորական թվացող գործողություններն ու հոգեկան ալեբախումները պատկերել մերթ նկարչական ճշգրտությամբ, մերթ էլ «կինոյի լեզվով»[8]:

2.2 ՓԱՐԻԶՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ

Ատենախոսության այս հատվածում նկատվել է, որ փարիզյան ժամանակաշրջանը Եսայանի կյանքում ունեցել է բեկումնային նշանակություն: Արվեստների քաղաքը նրան հնարավորություն է տվել ոչ միայն ընդլայնելու իր գիտելիքները գրականության և փիլիսոփայության ոլորտներում, ծանոթանալու եվրոպական գրականության ժամանակակից նվաճումներին, գրական արդի մեթոդներին, այլև անձնապես ճանաչելու և շփվելու այնպիսի մեծությունների հետ, ինչպիսիք էին Երվանդ Օտյանը, Սիամանթոն, Արշակ Չոպանյանը և այլք: Ուստի վստահաբար փաստել ենք, որ հենց այս ժամանակահատվածում Եսայանի մեջ հիմնավորապես արմատավորվել է *ազգային մտածողությունը*. Փարիզում Եսայանին հնարավորություն ընձեռվեց սեփական ժողովրդին քաղաքակրթական ձեռքբերումներին հաղորդակից դարձնելու, ինչպես նաև հայոց տառապանքների մասին բարձրաձայնելու աշխարհին:

---

[8] Ինչպես ատենախոսության մեջ, այնպես էլ այստեղ հարկ ենք համարում հատուկ ընդգծելու, որ Զ. Եսայանի՝ մարդկային հոգեբանական ապրումները «կինոյի լեզվով» պատկերելու շնորհը, ի թիվս հեղինակի գրական այլևայլ արժանիքների, մեզանում առաջինը նկատել է պրոֆ. Ալ. Մակարյանը (տե՛ս **Մակարյան Ալ.**, Զապել Եսայանի «Սիլիհտարի պարտեզները», «Վեմ» համահայկական հանդես, 2016, N 1 (53), էջ 68- 96), սակայն գրականագետի խնդրո բուն առարկան այս դեպքում եղել է միայն «Սիլիհտարի պարտեզները»: Փորձելով ընդլայնել Ալ. Մակարյանի՝ եսայանագիտության մեջ բացած նոր արահետը՝ վիպագրուհու տարբեր երկերի գեղարվեստական արժանիքներն էլ քննվել են՝ «կինոյի լեզվով» պատկերման առանձնահատկությունից ելնելով: Սրան ավելացրել ենք նաև Զ. Եսայանի պատկերների նկարչական ճշգրտությունը՝ կարծիք հայտնելով, որ դա կարող է կապված լինել նաև գրագիտուհու՝ հայտնի նկարիչ Տիգրան Եսայանի կինը լինելու բարեպատեհությամբ:

Հաշվի առնելով, որ Եսայանի կատարած հոգեբանական նրբին դիտարկումների մասին հանգամանալից խոսվել է աշխատանքի նախորդ հատվածներում, ուշադրության կենտրոնում ենք պահել «Կեղծ հանճարներ» երգիծական վիպակը Փարիզում ապրող հայ ուսանողների կենսակերպի մասին: Քննելով երգիծանքի եսայանական առանձնահատկությունները՝ նկատել ենք, որ այստեղ երգիծականն ու ողբերգականը հանդես են գալիս միասնաբար: Ստեղծագործության մեջ *իսպառ բացակայում է ոչնչացնող ծաղրը*. դրա փոխարեն երևան է գալիս բարեմիտ ու մեղմ հումորը, որը, ապամիֆականացման միջոց լինելուն զուգահեռ, ուներ դաստիարակչական նշանակություն և արտահայտում էր հեղինակի ցավը: Նկատել ենք նաև, որ ստեղծագործության գլխավոր հերոս Տաճատի (նրա նախատիպը, ինչպես հայտնի է, Ինտրան է՝ Տիրան Չրաքյանը)՝ գրականության մասին պատկերացումներն այդքան գունագեղ ներկայացնող Զ. Եսայանը վիպակում հանդես է գալիս նաև որպես գրաքննադատ՝ իր երգիծող հայացքն ուղղելով այն գրողներին, որոնք ամեն ինչ անում էին գրականության մեջ բացառապես իրենց *ես-ը* ներկայացնելու համար և ընթերցողին ձանձրացնում իրենց նեղ անձնական ապրումների նկարագրությամբ:

Այս ենթագլխում ուսումնասիրել ենք նաև «Բարպա Խաչիկ» մեծածավալ վեպը: Թեև այն հիմնականում ծրագրային գործ է, և բուն նպատակը խորհրդային հասարակարգի գովաբանումն է, այնուամենայնիվ մեր կողմից ընտրված պայմանական թեմատիկ բաժանման մեջ այն ներառել ենք որպես պոլսական և ֆրանսիական ժամանակաշրջանը պատկերող ստեղծագործություն, քանի որ վիպական դեպքերը տեղի են ունենում բացառապես վերը նշված միջավայրերում:

Ի մի բերելով այս ժամանակաշրջանի պատկերման առանձնահատկությունները՝ աշխատանքի այս հատվածում կարևոր ենք համարել խոսել նաև ժամանակակից Փարիզի եսայանական ընկալման մասին, ինչը նկատել է նաև Վ. Ռոուն. ինչպես նախընթաց երկու դարերում, այնպես էլ մեր օրերում Փարիզը (նաև Հռոմը) թե՛ իրականության, թե՛ գրականության մեջ ներկայանում է որպես երազանքների իրականացման քաղաք: Այն քաղաքակրթության, գեղեցկության և արվեստի կենտրոն էր, որտեղ կարելի էր շփվել և հարաբերվել տաղանդավոր, հաջողակ և բարեկեցիկ կյանքով ապրող եվրոպացիների հետ, ինչպես պատահում է Տյուսաբի հերոսների հետ: *Սակայն Եսայանի իրապաշտական գրականության էական առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ գրողը կարողացել է պատկերել ամենքին երանելի թվացող փարիզյան կյանքի՝ առաջին հայացքից չերևացող «ներքին» կողմերը: Սա միանշանակ գրողական առավել բարձր տաղանդի և մարդկային իրական ճակատագրերի պատկերման ինքնատիպ մեթոդի արգասիք էր:*

2.3 ԿԻԼԻԿՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ

Երկրորդ գլխի այս ենթագլխում խոսել ենք ազգային ողբերգության եսայանական պատկերման առանձնահատկությունների մասին:

«Ավերակներուն մեջ» հուշագրությունը, որը, Հ. Օշականի բնորոշմամբ, *Ջ. Եսայանի փաղանդի պսակն է,* գրված է Կիլիկիայի հայ բնակչության ջարդերի անմիջական ազդեցությամբ: Հստակեցնելով ստեղծագործության ժանրային պատկանելիությունը՝ նկատել ենք նաև դրա հիմնական կառուցվածքային առանձնահատկությունը, այն է՝ հուշագրության առանձին մասերը, նման «Սիլիհտարի պարտեզներ»-ի կառուցվածքին, կարող են հանդես գալ նաև առանձին-առանձին՝ որպես ինքնուրույն երկեր:

Չունենալով ավանդական դիպաշար՝ վիպակը լեցուն է դժոխային տեսարաններով, և դրանց միջոցով են ընթերցողին փոխանցվում հեղինակի տեսածն ու զգացածը. ուրիշ խոսքով՝ *ամբողջ ստեղծագործությունը դժոխային տեսարանների համանվագ է....*

Նշված տեսարանների մասին խոսելիս տեղին է ընդգծել *ներկայացնել, նկարագրել և պատկերել* բայերը, և հաստատապես ասել, որ այս դեպքում ևս Եսայանը *պատկերում* է տեսարանը՝ *ընթերցողի հետ խոսելով կինոյի լեզվով, այս անգամ՝ սարսափ հիշեցնող կինոյի:*

Ամբողջական տեսարանների պատկերմանը զուգահեռ՝ միջժանրային այս երկում առկա են նաև առանձին պատկերներ, որոնք ունեն սիմվոլիկ-խորհրդանշական իմաստ. ժամանակաշրջանը պատկերող ողբասացության մեջ դրանք կրկնվում են տարբեր հեղինակների ստեղծագործություններում՝ «անդամալույծ լեզվի մը պես կախված» համրացած զանգակ, կոտորածի լուռ վկա թթենի, մոխիրների վերածված հայրենիք, գարշահոտ դիակներ, խելագարված մայրեր, բանտարկյալներ և կախաղաննե՛ր, կախաղաննե՛ր, կախաղաննե՛ր.....

Սարսափազդու տեսարանների պատկերման համատեքստում աշխատանքի այս հատվածում քննել ենք նաև *Եսայան-Սիամանթո գրական առնչությունները:*

Կիլիկիայում տեղի ունեցած ողբերգական դեպքերի մասին են նաև Եսայանի «Անեծքը», «Նոր հարսը» և «Սաֆիե» ստեղծագործությունները, որոնք իրենց գեղարվեստական մշակմամբ, ասելիքի ուժգնությամբ և պատումի կատարելությամբ բոլորովին նոր որակ են հաղորդում հեղինակի արձակին:

«Նոր հարսը» ստեղծագործությունը (հաշվի առներով ժանրային պատկանելությունը՝ այն վստահաբար դասել ենք նորավեպերի շարքին) իր բովանդակային նորությամբ ոչ թե բուն կոտորածների, այլ դրանց հետևանքների գեղարվեստական պատկերմամբ բոլորովին նոր էջ է բացում հեղինակի արձակում: *Նորությունն ամենից առաջ այն է, որ կոտորածի ողբերգական պատկերներն ու հետևանքներն այստեղ երևում են ոչ թե հայ ընտանիքների կյանքում, այլ, ընդհակառակը, դահիճների...*

Ահա այսպիսի արյունալի տեսարանների հարուցած ցավալի ապրումներն ըմբռնելուց հետո միայն կարելի է ճշմարիտ կերպով հասկանալ Եսայանի կողմից խորհրդային խաղաղ ժամանակահատվածի անկեղծ փառաբանումը:

2.4 ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ

Աշխատանքի երկրորդ գլխի վերջին ենթագլուխը նվիրված է խորհրդային ժամանակաշրջանի պատկերմանը: Նկատելի է, որ չնայած իր հակասականությանը՝ ԽՍՀՄ-ն անջնջելի և անուրանալի ազդեցություն է թողել հայ ժողովրդի վրա՝ տալով նրան աշխատանք, կրթություն, մշակույթ և առհասարակ ապրելու հնարավորություն: Ուստի կարծում ենք, որ գերազանցապես սա է եղել պատճառը, որ Եսայանը բուռն կերպով ողջունել է Հայաստանի խորհրդայնացումը, ինչը ոչ միայն բնական, այլև այդ ժամանակվա համար միանգամայն արդարացի մոտեցում էր, և հեղինակի մասին խոսելիս ուսումնասիրողը պարտավոր է վերջինիս դիտարկել իր (հեղինակի) ժամանակի մեջ:

Աշխատանքի այս հատվածում քննության ենթարկելով հիմնականում «Նահանջող ուժեր» և «Պրոմեթեոս ազատագրված» երկերը՝ նկատել ենք, որ դրանք գերազանցապես ծրագրային ստեղծագործություններ են՝ ուղղված խորհրդային հասարակարգի պատկերմանն ու փառաբանմանը:

Ենթագլխում կատարված վերլուծությունների ամփոփմամբ եզրակացրել ենք, որ այս շրջանի ստեղծագործությունները, առանձնապես չունենալով գեղարվեստական լրջագույն արժեք, այնուամենայիվ, օգնում են ամբողջացնելու Զապել Եսայանի վիպաշխարհի գունապնակը և վավերական կարևոր տեղեկություններ են հաղորդում ժամանակահատվածի վերաբերյալ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրության ընթացքում եկել ենք հետևյալ եզրակացությունների.

- Իբրև գրող՝ Զապել Եսայանն առավելապես փոքր ծավալի ստեղծագործությունների վարպետ է. նրա գրողական տաղանդը երևում է հատկապես նորավեպերում և փոքրածավալ վիպակներում:
- Եսայանը հայ իրականության մեջ հոգեբանական արձակի նշանավոր դեմքերից է, և այս առումով վերջինիս փոքր ծավալի ստեղծագործությունները վստահաբար կարող են մրցել ինչպես հայրենի, այնպես էլ համաշխարհային գրականության ընտիր նմուշների հետ:
- Եթե գրականությանը հայտնի ամենահաջող նորավեպերում մանրամասն և համոզիչ պատկերված է գերազանցապես կանացի հոգեբանությունը, ապա Եսայանն իր նորավեպերում կարողացել է նույնքան հաջող պատկերել տղամարդու հոգեկերտվածքը («Մրցումը» նորավեպը):
- Գեղարվեստականացնելով կնոջ ազատագրության խնդիրը՝ Եսայանը հաջողությամբ պատկերել և հայ գրականություն է բերել նաև հաղթանակող և վրեժխնդիր կնոջ կերպարներ («Մրցումը» և «Սիրո վրեժը» նորավեպերը):
- Իբրև ստեղծագործական նյութ ընտրելով իրական կյանքը՝ Եսայանը զերծ է մնացել «հեքիաթապատում» հիշեցնող գործողությունների ընթացքից և կերպարներից՝ պատումը և կերպարներն օժտելով հոգեբանական խոր համոզչականությամբ:
- Եսայանի ստեղծագործություններին գրավչականություն է հաղորդում գործող անձանց՝ իրենց գործողություններով և դատողություններով «ինքնադրսևորվելու» մեթոդը. հեղինակը մեծ մասամբ զերծ է մնացել կերպարների ներկայացումից՝ թույլ տալով, որ ընթերցողը ճանաչի նրանց:
- Հեղինակի գրիչն ամենից առաջ աչքի է ընկնում գեղարվեստական գրավիչ պատկերների ստեղծմամբ: Վիպագրուհուն հաջողվել է մարդկային ամենօրյա թվացող գործողությունները և հոգեբանական ապրումները պատկերել նկարչական ճշգրտությամբ կամ «կինոյի լեզվով» («Սիլիհտարի պարտեզները» վիպակը):
- Համեմատաբար մեծ ծավալի երկերում՝ վիպակներում և վեպում, Եսայանը երբեմն շեղվել է իրեն բնորոշ ոճից՝ տեղ տալով անհարկի տեսարանների, կիսատ մնացած ճակատագրերով կերպարների («Արգելքը» վիպակը, «Բարպա Խաչիկ» վեպը և այլն):
- Վիպագրուհու արձակին բնորոշ են ինքնակենսագրական տարրերը, ինչի արդյունքում ընթերցողին հայտնի դարձած կերպարները և երևույթները հաճախ են ի հայտ գալիս տարբեր ստեղծագործություններում («Ինքնակենսագրություն», «Սիլիհտարի պարտեզները», «Բարպա Խաչիկ» երկերը):

- Հոգեբանական արձակին զուգահեռ՝ Եսայանը հաջողությամբ ստեղծել է նաև երգիծական փայլուն էջեր՝ դրանցում միավորելով երգիծականն ու ողբերգականը («Կեղծ հանճարներ» վիպակը):
- Եսայանի վիպական գործողությունների շրջանակը, համահունչ իր կենսագրությանը, հիմնականում ընդգրկում է Կ. Պոլիսը, Փարիզը, Կիլիկիան և Խորհրդային Միությունը:
- Փարիզյան կյանքը Զ. Եսայանը, ի տարբերություն իր ժամանակակիցների, հիմնականում պատկերել է սոցիումի խնդիրներով և այնտեղ բնակվող «փոքր մարդկանց» խեղված ճակատագրերով:
- Զ. Եսայանի՝ հայկական ջարդերին նվիրված ստեղծագործությունների հիմնական առանձնահատկությունն այն է, որ կոտորածի ողբերգական պատկերներն ու հետևանքներն այստեղ երևում են ոչ միայն հայ ընտանիքների կյանքում, այլև դահիճների («Նոր հարսը» նորավեպը):
- Խորհրդային ժամանակաշրջանն աչքի է ընկնում Եսայանի՝ այն ժամանակ ունեցած քաղաքական կողմնորոշմամբ, խիստ գաղափարականացված դիպաշարերի արդյունքում ստեղծված գրականությամբ, ինչպես նաև սեփական ժողովրդի փրկության ճանապարհի հեղինակային մատնանշմամբ:
- Գրական ուղղություններից Զ. Եսայանը նախընտրել է ռեալիզմը՝ հագեցված մարդկային հոգեբանության պատկերմամբ, ինչն էլ կարող ենք անվանել հոգեբանական ռեալիզմ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. **Հովհաննիսյան Հ.**, Ժամանակաշրջանը և մարդիկ Զապել Եսայանի «Կրակե շապիկը» վիպակում, «Հայագիտության հարցեր» 3/21/, Երևան, 2020, էջ 164-173:
2. **Հովհաննիսյան Հ.**, Խորհրդային Հայաստանը և Զ. Եսայանի գեղարվեստը, «Հայագիտական հանդես», թիվ 1(50), Երևան, 2021, էջ 101-108
3. **Հովհաննիսյան Հ.**, Երգիծականն ու ողբերգականը Զապել Եսայանի «Կեղծ հանճարներ» վիպակում, «Վեմ» համահայկական հանդես, 3/75/, Երևան, 2021, էջ 120-130:
4. **Հովհաննիսյան Հ.**, Կիլիկիայի հայ բնակչության ջարդերի հետևանքները Զապել Եսայանի պատկերմամբ, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1 /130/, Երևան, 2021, էջ 71-81:
5. **Հովհաննիսյան Հ.**, Զապել Եսայանի պատմափիլիսոփայությունը, «Բանբեր Հայաստանի արխիվների», 2/131/, Երևան, 2021, էջ 133-142:
6. **Հովհաննիսյան Հ.**, Զապել Եսայանի նորավեպերը, «Գրականագիտական հանդես», ԻԳ, Երևան, 2021, էջ 50-58:

АЙК ОГАННИСЯН
ХУДОЖЕСТВЕННЫЙ МИР ЗАПЕЛ ЕСАЯН

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.01.01 - «Средневековая и новая армянская литература».

Защита диссертации состоится 03 июня 2026 г. в 14^{30} на заседании специализированного совета литературоведения 012 ВАК РА действующего при Ереванском государственном университете.

Адрес: г. Ереван, ул. Абовяна $52^{а}$, корпус факультета армянской филологии ЕГУ, 202 аудитория.

Резюме

Актуальность темы исследования. В последние годы в литературно-культурной жизни Армении возрос интерес к творчеству Запел Есаян. Это обусловлено бунтарской биографией автора, ее передовыми взглядами и актуальностью предлагаемых ею тем.

Погромы в Киликии, Геноцид и потеря родины, чужбина и возможность иметь национальное государство на родной земле – все эти вопросы актуальны по сей день. Помимо этого, Есаян затрагивает такие общие для всего человечества темы, как любовь, мечты, борьба, стремление человека к духовной свободе, которые никогда не теряют актуальности.

Актуальность темы исследования обусловлена также тем, что Запел Есаян, став жертвой культа личности, долгие годы была запрещенным автором, и многие ее произведения не публиковались.

Внимательно проанализировав то, как проявляется интерес к Запел Есаян, мы пришли к выводу, что наиболее известна и находится в центре внимания общественно-политическая деятельность автора, в частности вопросы, касающиеся феминизма, и исследователей, по-видимому не привлекает научное изучение созданной автором высокохудожественной литературы, поэтому необходим свежий научный взгляд и давно настало время для изучения художественного мира Запел Есаян с использованием современных методов. Именно такую цель преследует настоящая диссертация.

Цели и задачи исследования. При анализе художественного мира Запел Есаян основной целью и задачами исследования являются:

- определить жанровый состав прозы Запел Есаян;
- провести тематическое разделение произведений;
- проанализировать созданные автором литературные образы;
- рассмотреть повествовательное искусство;
- представить оценку исключительной роли Запел Есаян в истории армянской литературы.

Научная новизна исследования. Выдвигаемые нами положения представляют для есаяноведения научную новизну, которая выражается в следуюшем:

- впервые сделана попытка четкого тематического разделения прозы автора
- мысли, высказанные в архивных документах (часть их обнаружена недавно) Есаян, стали исходной точкой трактовки литературных произведений
- для многих произведений Есаян был определен жанр, были разграничены новелла и рассказ, роман и повесть, мемуары и путевые записки, которые до этого исследовались под общим названием "произведение" или "сочинение"
- если проф. С. Арзуманян, следуя принципам советского литературоведения, пытался подчеркнуть в образах, выведенных в произведениях Запел Есаян, классовую борьбу, а А. Саргсян ставил целью исследование и выявление исключительно образа интеллигента, то в настоящем исследовании образы, представленные в произведениях Есаян, были рассмотрены с разных сторон при сопоставлении художественного и реального аспектов
- В центре внимания исследования язык и стиль З. Есаян, ее исключительная способность придавать словам магические краски и движения, и в этом плане впервые была представлена художетвенная оценка многих произведений автора, а повествовательное искусство З. Есаян было освещено с разных сторон.

Методология исследования. В попытках представить посредством анализа художественный мир Запел Есаян, нами была выбрана следующая методология: посредством комбинации разных методов исследования (сравнительно-исторического, биографического, поэтического, социологического) мы попытались разносторонне рассмотреть прозу Есаян, выявить ее композиционные и идейно-художественные особенности. Мы стремились также избежать искусственного схематизма, который часто встречается в современном литературоведении.

Структура диссертационного исследования. Работа состоит из введения, двух глав с соответствующими подглавами, выводов и списка использованной литературы.

Общий объем диссертации составляет 135 страниц.

Первая глава под названием **"Малая социально-психологическая проза Запел Есаян"** состоит из трех разделов ("Новеллы", "Рассказы" и "Повести"). Здесь подробно рассмотрены новеллы, рассказы и повести прозаика. В контексте армянской и при необходимости восточноевропейской литературы из произведений Есаян, принадлежащих к малой прозе, были выделены новеллы с описанием их жанровых особенностей. Были сделаны выводы о том, что,

обладая известными признаками, вместе с тем данный жанр обретает значимость благодаря своей так называемой скрытой идеологии, то есть часто не выражаемому явно, но понятному из контекста смыслу. В других разделах первой главы рассмотрены рассказы и повести Есаян, при этом в центре внимания – психологическая убедительность и глубина образов рассказов и повестей романистки.

Вторая глава под названием **"Эпоха и человек в художественном мире Запел Есаян"** состоит из четырех разделов ("Константинопольский период", "Парижский период", "Киликийский период" и "Советский период"). В этой главе рассмотрены средства художественной выразительности в произведениях автора, преимущества литературы, созданной в результате синтеза реального и художественного аспектов. Представлены также политические взгляды Есаян, способы их выражения в литературе, а также то, как проявляли себя литературные персонажи в разной среде.

Во второй главе было также отмечено, что, помимо тонких психологических наблюдений, перу Есаян принадлежат также блестящие страницы сатирической прозы.

Диссертацию завершают выводы и список использованной литературы.

HAYK HOVHANNISYAN
ZAPEL YESAYAN'S ARTISTIC WORLD

Dissertation to obtain the degree of a Candidate of Philology. Field of specialization: 10. 01.01 – Armenian Medieval and Modern Literature.

The defense of the dissertation will take place on June 3, 2026 at 14:30 p.m., at the HQC (Higher Qualification Committee) Specialized Counsil 012 of "Literature Studies" at Yerevan State University (YSU).

Address: 0025, Yerevan, Abovyan st. 52/A, YSU, 8th building, Faculty of Armenian Philology, room 202.

Summary

Relevance of the research theme. During the recent years, interest in Zapel Yesayan's work has grown in the literary and cultural life of Armenia. This is conditioned by the author's rebellious biography, her progressive views, and the relevance of the themes advanced by her.

The pogroms in Kilikia, the Genocide and the loss of the Homeland, foreign lands and an opportunity to establish a national state on her native land — all these issues remain relevant today. Furthermore, Yesayan touches upon such universal themes as love, dreams, struggle, and the human desire for spiritual freedom, that never lose their relevance.

The relevance of the research theme is also conditioned by the fact that Zapel Yesayan, being a victim of the personality cult, has been considered as a banned author for many years, and many of her works have remained unpublished.

Having carefully analyzed the expressions of interest towards Zapel Yesayan, we concluded that the author's socio-political activities, particularly issues related to feminism, are best known and have received utmost attention. The researchers apparently are not attracted by the scientific study of the high fiction created by the author, therefore, a fresh scientific view is needed, and it is high time to study Zapel Yesayan's artistic world using modern methods. This is precisely the goal of the present dissertation.

Goals and objectives of the study. While analyzing Zapel Yesayan's artistic world, the main goals and objectives of the study are the following:

- to determine the genre composition of Zapel Yesayan's prose;
- to thematically classify her works;
- to analyze the literary images created by the author;
- to examine narrative art;
- to present an assessment of Zapel Yesayan's exceptional role in the history of Armenian literature.

Scientific novelty of the study. The dissertatioin put forward by us represent a significant innovation in Yesayan's studies, which is expressed in the following:

- for the first time an attempt was made to clearly delineate thematically the author's prose;
- thoughts expressed in Yesayan's archival documents (some of which have been recently discovered) became a starting point for interpreting literary works;
- a genre was defined for Yesayan's many works, a distinction was made between a novella and a short story, a novel and a story, memoirs and travel notes, which have previously been studied under the general title of "works" or "essays";
- whereas Ph.D A. Arzumanyan, following the principles of the Soviet literary criticism, attempted to emphasize class struggle in the images depicted in Zapel Yesayan's works, and A. Sargsyan aimed to explore and identify exclusively the image of the intellectual, in this study, the images presented in Yesayan's works were examined from various perspectives, comparing artistic and real aspects.
- The study focuses on Z. Yesayan's language and style, her exceptional ability to imbue words with magical color and movement. In this regard, for the first time, an artistic assessment of many of the author's works was presented, and Z. Yesayan's narrative art was covered from various perspectives

Research methodology. In an attempt to present Zapel Yesayan's artistic world through analysis, we have chosen the following methodology: through a combination of various research methods (comparative-historical, biographical, poetic and sociological), we attempted to examine Yesayan's prose from a comprehensive perspective, identifying its compositional, ideological and artistic features. We also sought to avoid the artificial schematism often encountered in the contemporary literary criticism.

The stucture of the dissertation. The work consists of an introduction, two chapters with corresponding subchapters, conclusions and a list of references.

The total length of the dissertation is 135 pages.

The first chapter, entitled "Zapel Yesayan's Short Socio-Psychological Prose", consists of three sections ("Novellas," "Stories" and "Short Stories"). Here, novellas, stories and short stories of the novelist are examined in detail. In the context of the Armenian and, where appropriate, Eastern European literature, novellas were selected from Yesayan's short fiction works, with the description of their genre characteristics. It is concluded that, while possessing certain characteristics, this

genre also gains significance due to its so-called hidden ideology, that is, a meaning often not explicitly expressed but understood from the context. Other sections of the first chapter examine Yesayan's stories and short stories, focusing on the psychological persuasiveness and depth of imagery in the novelist's stories and short stories.

The second chapter, entitled "Epoch and Man in Zapel Yesayan's Artistic World" consists of four sections ("The Constantinople Period," "The Parisian Period," "The Kilikian Period," and "The Soviet Period"). This chapter examines the means of artistic expression in the author's works and the advantages of the literature created as a result of the synthesis of real and imaginative aspects. It also presents Yesayan's political views, the ways in which they were expressed in literature, as well as how literary characters manifested themselves in different environments.

The second chapter also noted that the brilliant pages of satirical prose also belonged to Yesayan's pen in addition to subtle psychological observations.

The dissertation is summed up with the conclusion and a list of references.